

ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ ԻՐ ԱՅՅԵԼՈՒՆԵՐՈՒՆ ԷՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԲԱՐԳԱԲԱՃԱՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երկվ ընդունեց երեսփոխաններ Ասատ Հարությունի և Անտոն Հատուտյան, որոնց հետ քննարկեց շրջանային իրադրությունները և ներքին քաղաքական պարզացումները, ինչպես նաև Մեթն շրջանի կարիքները:

Հիսուսային Մեթնի քաղաքացիներին համարում են համարվում են ներկայացնող պատուիրակության մը նախագահ Լահուտի յանձնեց Մեթն շրջանի կարիքներուն մասին թղթածրար մը:

Նախագահ Լահուտ հաւաստեց, որ կը հսկէ Լիբանանի բոլոր շրջաններուն մէջ բարգաւաճման ծրագիրներու գործադրութեան:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ շնորհատրական հետազոտներ յղեց Տարիլ Իսայի, Ռէյ Լահուտի և Նիք Ռահիայի, որոնք ծագումով լիբանանցի են և ընկերակցականներ ընտրուած են Միացեալ Նահանգներու մէջ կայացած խորհրդարանական և ծերակուտական ընտրութիւններուն:

Նախագահ Լահուտ շնորհատրեց նաեւ ճո՛ն Մնունուն, ծերակուտական ընտրութիւն առիթով:

ՇԷՅՆ ՔԱՊԱԼԱՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ ԵՐԿՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԿՏԱՆԳՆԵՐԷՆ

Շիններու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ Շէյն Ապտէլ Էմիր Քապալան երկվ վեր առաւ Ռամատի ծննդավայրէջում խորհուրդը, կարեւորութիւն ու արդիւնքները:

«Ռամատի ամիսը յատկապէս կարեւոր է, որ ընդմիջումներ անցնելով, օգտուեցէ՛ք այս առիթէն, անսացէ՛ք այս ամսուան խորհուրդին ու պատգամին, և հաւատարիմ մնացէ՛ք Մարգարէի հանդուրժողութեան, պատուութեան, սիրոյ, արդարութեան և անկեղծութեան յորհրդներուն», ըսաւ ան:

Շէյն Քապալան մատնանշեց հայրենիքին սպառնացող վտանգները և հարց տուաւ, որ ատենը եկած չէ՞՞ հրաժարելու սապարէկ կարողանալու, սպանալիքներ ու ռճէն, և մեր խիղճներուն անսայով՝ հանդիպելու, տեսակցելու և ազգային երկխօսութեամբ բիրեղացընելու մեր ազգային հաշտութիւնը:

«Հանրապետութեան նախագահին կ'ըսեմք. Մեք հե՛տը ենք փրկութեան երթին մէջ, հե՛տը ենք՝ թափ տալու երկխօսութեան, միացնելու շարքերը, համախորհրդելու լիբանանցիները, վանելու ներքին հարցերուն դրոշմապատճառները և դէմ դնելու այս երկիրը բաժանելու և միջանախաբանի հարցերը բորբոքելու փորձերուն», ըսաւ ան:

Շէյն Քապալան նաեւ քննադատեց ՄԱԿի որոշումները անտեսող խաղաղութեան քարտէսին ծրագիրը և կոչ ուղղեց զօրավիճ կանգնելու Իրաքի:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ժանէթ Արթինեան
Տէր և տիկին Յակոբ Արթինեան և զաւակուք
Տէր և տիկին Միսաք Արթինեան և զաւակուք
Տէր և տիկին Սիրոյն Յակոբեան և զաւակուք
Տիկին Ովսաննա Արթինեան և զաւակուք
Տիկին Սեվիլ Մաճառեան և զաւակուք
և համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, մեծ հօր և հարազատին՝

ԳԵՈՐԳ ԱՐԹԻՆԵԱՆԻ (ՇՃԵԱԼ՝ 1929ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 8 Նոյեմբեր 2002ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 9 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Առանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Պուրճ Համուտի Քաղաքացիներու զաւարտի կից, Պղք «Ծ» շէնքեր, Շաբաթ 9, Կիրակի 10 և Երկուշաբթի 11 Նոյեմբերին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Շաքէ Բազլայեան
Տէր և տիկին Կարո Բազլայեան և զաւակուք
Տէր և տիկին Ժողէֆ և Վերա Տապաղեան և զաւակուք
Տէր և տիկին Գէորգ Թաշեան և զաւակուք
Տէր և տիկին Կարապետ Բազլայեան և զաւակուք
Տիկին Սոնա Բազլայեան և զաւակուք
Տէր և տիկին Արրահամ Բազլայեան և զաւակուք
Տիկին Մարի Թէքեան և զաւակուք
Յովհաննէսեան ընտանիք
և համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոջ, եղբոր և հարազատին՝

ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐ ԲԱԳԼԱՅԵԱՆԻ (ՇՃԵԱԼ՝ 1918ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 7 Նոյեմբեր 2002ին, Լոս Անճելէսի մէջ, Միացեալ Նահանգներ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Պալմիտրի մէջ, Միացեալ Նահանգներ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յուսակցութիւնները կ'ընդունուին տէր և տիկին Ժողէֆ և Վերա Տապաղեաններու բնակարանը, Նաքթա, Շաբաթ 9, Կիրակի 10 և Երկուշաբթի 11 Նոյեմբերին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

• ԼԻԲԱՆԱՆԻ մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան երկվ այցելեց խմբագիրներու սենտրալի նախագահ Մըրիէմ Քարամի, որուն հետ քննարկեց Լիբանան – Հայաստան երկկողմանի յարաբերութիւնները և պատերազմի վերջնական լուծումը:

Յովհաննիսեան Քարամը պաշտօնապէս հրաւիրեց այցելելու Հայաստան:

• ՍՈՐՈՒՆՆԵՐԻՆԻ նախագահ Նեպիի Պըրրի երկվ Այն Էլ Թիքէի մէջ ընդունեց հարաւի քաղաքացիները, որոնց հետ քննարկեց բարգաւաճման ծրագիրներու առնչուած հարցեր:

• ՎԱՐՉԱՊԵՏ Ռաֆիք Հարիրի երկվ ընդունեց բանակի հրամանատարութեան մէկ պատուիրակութիւնը, որմէ ստացաւ Լիբանանի անկախութեան առիթով հանդիսութեան ներկայ գտնուելու պաշտօնական հրաւեր մը:

Նշենք նաեւ, որ վարչապետ Հարիրի այսօր յետմիջօրէին կը մեկնի Քարթա, «Փարիզ-2» ժողովին պատուիրակութիւններու ծիրին ներս հանդիպումներ ունենալու քաթարցի պետական և բարձրաստիճան պաշտօնատարներու հետ:

• ԻՐԱՅԵՆԵՆԻ օդանւթ երկվ թռիչքներ կատարեցին Նապարէի և Իքիմ Թուֆահի վերել՝ բնաբարելով երկու երկիրները բաժնող սահմանը:

• ԿԵՆՍՈՒՆՈՐՏԻ նախարար Միշէյ Մուսա երկվ նախագահեց քարահատման վայրերու ազգային խորհուրդին ժողովին, որուն ընթացքին շեշտեց, որ պէտք է արագապէս քարահատման վայրերու մէջ աշխատանքի արտօնագիր ձեռք ձգելու գործողութիւնը և կանոնաւորուի աշխատանքը:

• ԱՇԵՆԱՍՆՔԻ նախարար Ալի Քանսօ երկվ ընդունեց լիբանանցի օդաչուներու սենտրալի նախագահ Մահմուտ Հուճանի և պատուիրակութիւնը, որոնք շնորհակալութիւն յայտնեցին Քանսոյի «Միտըլ Իսթ» օդանւթային ընկերութեան մէջ օտար օդաչուներու աշխատանքի առիթ ընծայելու որոշումին համար:

ՄՈՒՐԹՈՒՋ ԱԼԵՍԲԵՐՈՎ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ

բռնագրաւուած է, իր տարածքին վրայ չունի օտար խորհրդներ և կ'ուզէ համարկուելու Եւրոպայի հետ, իսկ Հայաստանը՝ «յարձակողապաշտ» երկիր մը, իր տարածքին վրայ ունի ռուսական խորհրդներ և մտադիր չէ համարկուելու Եւրոպայի հետ, սակայն միջազգային ընտանիքը միատեսակ մօտեցում կը ցուցաբերէ այս երկիրներուն հանդէպ:

Թերթը հաղորդած է, թէ ըստ Ալեքսեբրովի, Եւրոպական խորհուրդը պաշտօնապէս ճանչցած է Հայաստանը իբրեւ «յարձակողապաշտ», սակայն ԵԱՀԿ, որ ուղղակիօրէն առնչուած է Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման, չ'անապարտե հետեւելու Եւրոպական խորհուրդին քայլին: Ազգայնական խորհրդարանի նախագահը աւելցուցած է, թէ «Ազգայնական ունի ռազմական բաւարար միջոցներ իր տարածքները ազատագրելու համար, սակայն նախապատուութիւնը կը տայ տագնապին խաղաղ լուծման»:

«Կազէք 525»-ի համաձայն, ԵԱՀԿի ներկայացուցիչները անպատասխան ձգած են Ալեքսեբրովի ամբաստանութիւնները:

ԻՖԹԱՐ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ

եւ դիւանագէտներ: չուրթեան դէմ պայքարին կանգնեցան Ուաշինկթընի կողքին: Ան աւելցուց, որ իֆթարի սեղանը պատգամ մը կ'ուղղէ բոլոր ամերիկացիներուն, ըսելու համար, որ Ամերիկան պատերապմ կը մղէ արմատական ահաբեկչական ցանցի մը և ոչ թէ կրօնքի մը, կամ քաղաքակրթութեան մը դէմ:

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ

Շ. Յ. Գ. ԶԱԲԱՐԵԱՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՈՒԹԹԻՆ

8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2002

ԾԱՆՈՒ 3ԱՐԿԱՐԱԺԻՆ

• Մըզիտի շրջան, «Կարին 1», 240 քառ. մետր տարածութիւն, գեղատեսիլ դիրք, լողաւազան, յարմար գին:

Ընդ. 03-627469:

ԿՈՒՉՈՒԻՆ

- Ամերիկեան էր բոնտիչը՝ ընկերութիւն մը (Արեւմտեան Պէրոլը) կարող էր ունի փորձառու թեք-նիսիճներու, անցնող և նորոգող վարպետներու. ԵՒ և ՏՏ ունենալը նախընտրելի է:

- Նաեւ քարտուղարուհի մը՝ 3 տարուան փորձառութեամբ, անգլերէն լեզու և համակարգիչ գործածել գիտնալը պայման է:

Ընդ. 01-378801-5 և 03-816189:

«ՀԱՅ ԳՊՐՈՅԸ ԱՅՍՕՐ» ԹԵՄԱՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Կազմակերպութեամբ Թէքեան Մշակութային Միութեան Լիբանանի վարչութեան, երկվ Ուրբաթ, 8 Նոյեմբերի երեկոյեան ժամը 8:00ին, «Թէքեան» կեդրոնի «Հրաչեայ Սեղապետեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հայ դպրոցի ներկայ իրավիճակին նուիրուած կլոր սեղան:



Լիբանանահայութեան և ընդհանրապէս հայութեան կեանքին մէջ իւրապատու և հիմնական դերակատարութիւն ունեցող հայ դպրոցին տագնապներուն քննարկման մասնակիցներն էին բոլոր Թէքեանի Մարի Պետրոսեան, Ազատուհի Գայեթրեան, պատուելի Հրայր Չոլաքեան, Յակոբ Բագարեան, Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Լեզուութեան հիմնարկի բաժնի պատուիրակուած մասնակցներու, Երկրային կառուցման և զիտութեան փոխ նախարար Այտա Թոփուպեան, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, հայ երեսփոխաններ, տնօրէններ, ուսուցիչներ ու ծնողներ:

Երեկոյի բացումը կատարեց Արա Վասիլեան, որ ըսաւ, թէ հայ դպրոցին և անոր պահպանման անհրաժեշտութեան մեկնաձայնակերպուած է այս ձեռնարկը:

ԶՐՈՅՑ – ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅՐԵՆԻ ՄՏԱԻՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ

«ԱՂՃԵԱՆ» ճամբորդական և վրասաշարական հաստատութեան նախաձեռնութեամբ, վերջերս Լիբանան ժամանեց հայրենի պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու, մատուրականներու, մանկավարժներու, բժիշկներու և «Արմենիա» պատկերասփիւռի կայանը ներկայացնող պատուիրակութիւն մը, որ Լիբանան իր կեցութեան ընթացքին պիտի ծանօթանայ երկրին ազգային և հարակալական կառոյցներուն, ժողովուրդին առօրեային, ինչպէս նաեւ հնագիտական ու տեսարժան վայրերուն:

Այս առիթով, երկվ յետմիջօրէին Չալքայի «Ուայթ Թաուըր» պանդոնի «Մէյս էլ Ռիմ» սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում - վրոյց մը պատուիրակութեան անդամներուն և լիբանանահայ մամուլի ներկայացուցիչներուն միջեւ:

Հայրենի բարձրաստիճան պատուիրակութեան մաս կը կազմէին՝ կրթութեան և գիտութեան փոխ նախարար Այտա Թոփուպեան, կրթութեան և գիտութեան նախկին նախարար, ակադեմիկոս Էտուարտ

«Հայրենիք» և «Հայրեր և որդիներ» հաղորդաշարներու հեղինակ և հաղորդավար Ալինա Խաչատրեան, «Այմանախ» կրթական համալիրի տնօրէն Նունէ Յարութիւնեան, «Պանթոն» հասարակական կազմակերպութեան նախագահ և բժշկական համալիրի տնօրէն Երանկա Մարգարեան, «Պանթոն» հասարակական կազմակերպութեան նախագահ և բժշկական համալիրի տնօրէն Երանկա Մարգարեան, «Արմենիա» պատկերասփիւռի ընկերութեան գլխաւոր արտադրող,

ՀԱՅԱՍՏԱՆԱՅԻՆ ԵԿԵՂԵՑՈՅՈՑ ՀԱՍԱՆԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄՈՒԹԹԻՆ (ԵՇՇՈՍ)

ԴԱՍԱՆՍՈՒԹԻՆ

«ՍԱՏԱՆԱՅԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ՝ ՄԱՐԳԱՅԻՆ ԱՆԿՈՒՄԸ»

Դասախօս՝ **ՄԵԹՐ ԲԻԻԶԱՆԴ ՊԱՍԹԱՃԵԱՆ**

Տեղի կ'ունենայ այսօր՝ Շաբաթ, 9 Նոյեմբեր 2002, երեկոյեան ժամը 6:30ին, ԵՇՇՈՍ կեդրոնատեղիին մէջ, կաթողիկոսարան, Ասիլիաս:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է Հ. Յ. Գ. ԼԵՄԻ 2003Ի ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՑԸ

Հ. Յ. Գ. ԼԵՄԻ 30ամեակ

1973 2003

ՍԱԿ 10,000 ԼԻԲ. ՈՍԿԻ

ԲԱՅԱՌԻԿ ԱՌԻԹ

Ճամբորդութեան պատճառով MASTER MALLի մէջ ծախու է երկու ձամբու ճայող խանութ մը՝ 225 քառ. մետր, չափազանց մատչելի գինով:

Ընդ. 01-378801-5 և 03-880190:

Կազմակերպութեամբ՝ **Հ. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՄՈՒԹԹԵԱՆ «ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆԻ» ԿՈՐԻՉԻՆ**

ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆԻ ՍԱՇՈՒԱՆ 25ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՆԱՐԿ

Բանախօս՝ **ՊԱՐՈՅՐ ՏԵՐ ԶՈՒԿԱՍԵԱՆ**

Մասնակցութեամբ՝ **ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԿԱՐԿԱՉ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ**

Տեղի կ'ունենայ այսօր՝ Շաբաթ, 9 Նոյեմբեր 2002, երեկոյեան ժամը 6:00ին, Թրիփոլի Շ. Յ. Գ. ակումբի «Նաչիկ Պապիկեան» սրահին ներս:

ՀԱՅ ԳԻՐՔԸ ԼՈՅՍԻ ԱՌԱՔԵԱԼ Է

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՐԱՄԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շարունակելով իր շուրջ քառորդ դարու գեղեցիկ ասանդությունը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի գրատունը այս տարի էս կազմակերպեց Հայ Գիրքի 24րդ ցուցահանդէսը, որուն պաշտօնական բացումը տեղի ունեցաւ երէկ՝ Ուրբաթ, 8 Նոյեմբերի երեկոյեան ժամը 6:00ին, կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսի հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ բացման հանդիսութեան նաեւ ներկայ էին հայ կաթողիկէ պատրիարքական փոխանորդ Վարդան Էպս. Ազգարեան, միաբան հայրեր, լիբանանահայ կազմակերպութիւններու եւ միութիւններու պատկան ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ մեծ թիւով ներկաներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Մաշտոց վրդ. Չօպանեան, որ հայ գիրքի ու գրականութեան նուիրում ճուգահանդէսը նկատեց արդիւնք՝ անոնց դերին ու առաքելութեան հաւատացող հրատարակչատուներու, անհատներու



եւ ընթերցողներու անպիտող նուիրումին: Անդրադառնալով համաշխարհայինացման վտանգին դէմ դնող հայ գիրքի ու գրականութեան տագնապին, ան նշեց, որ «մարդիկ կը կարծեն, թէ հայ գիրքը կը նահանջէ, բայց ինքնագոյութեան մոլեգին պայքարի այս օրերուն հայ գիրքն ու գրականութիւնը, շնորհիւ իրեն հաւատացող սպասաւորներուն, պիտի պահէ նոյն բանակը՝ աննահանջ ու դէպի առաջ»:

Վստ իր յոյս ունեցաւ կաթողիկոսարանի «Չարեհեան» դպրեվանքի սաներու երգչախումբը, որ, ղեկավարութեամբ Մակար արք. Ազգարեանի, եռաձայն երգեցողութեամբ մեկնաբանեց «Որք Չարրարեցին», «Գովք Եղեսիոյ» եւ «Ով Մեծաքանն» շարականներն ու ազգային երգերը, որոնք արժանացան ներկաներուն շերմ գնահատանքին:

Հանդիսութեան ասարտին իր պատգամը փոխանցեց Արամ Ա. կաթողիկոս, որ շեշտելով հայ ժողովուրդին կեանքին ու գոյապահպանման մէջ հայ գիրքին ունեցած առանցքային ու կեդրոնական տեղը, ըսաւ, որ այս ցուցահանդէսը սովորական գիրքի վաճառք մը չէ, այլ հրաւեր մը մեզմէ իւրաքանչիւրին՝ արժեւորելու հայ գիրքի իւրայատուկ կարեւորութեան: Վեհափառը շեշտեց, որ հայ գիրքը պետք է դուրս բերել մթերանոցէն եւ գրադարանէն, պետք է վայն ունենայ եւ ընթերցողին ձեռքերուն մէջ պահել, «որովհետեւ գիրքին տեղը խաւարին մէջ չէ, այլ՝ լոյսին, որովհետեւ հայ գիրքը լոյսի առաքեալ է»:

Արամ Ա. կաթողիկոս իր պատգամին մէջ գնահատանքով անդրադարձաւ Սփիւռքի մէջ հայ գիրքի ու գրականութեան տարածման մեծապէս նպաստող «Գալուստ Կիւլպէնկեան»

Շար.ը՝ էջ 10

Շար.ը՝ էջ 10

ԵՐԿԻՍՍՈՒԹԻՒՆ՝ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌԻՂՂԱՓԱՐ ԵՒ ԱՆԿԼԻՔԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ



Նոյեմբեր 6ին սկսեալ Ս. Էջմիածինի մէջ տեղի կ'ունենայ երկխօսութեան հանդիպումներ Արեւելեան Ուղղափառ եւ Անկլիքան Եկեղեցիներուն միջեւ: Ասիկա Արեւելեան Ուղղափառ եւ Անկլիքան Եկեղեցիներուն միջեւ առաջին երկխօսութիւնն է, որուն նպատակն է յստակացնել Եկեղեցիներուն տեսակետները աստուածաբանական շարք մը հարցերու շուրջ:

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներուն կողմէ երկխօսութեան կը մասնակցին Ս. Էջմիածինի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն

Panasonic

FREE

DVD-RA61
DVD-AV Player
5.1-ch, MP3, JAPAN
Worth: **\$ 465**

42"

TC-21S85R
\$ 236

TC-21KS30R
\$ 242

SC-HT75
One Package Home Theater with 5 DVD, MP3
Worth: **\$ 495**

42"

RX-M70
Radio Cassette 18W
Worth: **\$ 40**

21"

NV-DS30
Digital Video Camera 2.5" 0 Lux
\$ 645

TC-14KM30R
14"

RE-WS10
Worldspace Receiver
Worth: **\$ 180**

RF-NA030
AM/FM Ultra Slim Pocket Radio
Worth: **\$ 38**

RE-WS10
Worldspace Receiver
Worth: **\$ 180**

TX-34P150X
34"

SC-AK600
Mini Compo 3200W, 5 CD, Dolby Digital
Worth: **\$ 300**

51"

SC-AK600
Mini Compo 3200W, 5 CD, Dolby Digital
Worth: **\$ 300**

43"

Bring in your National Panasonic Technics TV, VCR, Movie Camera, Mini Compo, DVD, Portable Audio or Kitchen Appliance to our Service Center and get up to 45% discount on parts and labor.

only on products guaranteed by TUNJIAN CORP. S.A.
04/712129-130, 711967, 03/243203
Fax: 04/712177, E-mail: TTC@cyberia.net.lb

November 1, 2002 to January 31, 2003

Up To **45% DISCOUNT**

السفير

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

8 Նոյեմբերի թիւով տեղական մամուլը գլխաւորաբար անդրադարձած է նախարարաց խորհուրդի Շահուանի առնչուող իրադարձութիւններուն, ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին կողմէ Իրաքի առնչութեամբ որդեգրուելիք բանաձեռին:

«Տիար» գրած է. «Նախարարաց խորհուրդը գումարեց կարճ եւ ընթացիկ նիստ մը, որուն ընթացքին եղած փոփոխութիւններուն պատճառներուն մասին նախարարները անտեղեակ էին»: Ըստ թերթին, վարչապետ Հարիրի հերքեց կառավարութեան փոփոխութեան մասին լուրերը, մինչդէռ շատ մը նախարարներ ընթացիկ գործեր վարելու մթնոլորտին մէջ կը գտնուին:

Թերթին համաձայն, Քարոյս Ըտտէ կը յայտարարէ. «Քրրնէթ Շահուանէն քաշուեցանք, բայց տակաւին ընդդիմադիր ճակատին մաս կը կազմեն»:

Ըստ «Նահար»ի, Քարոյս Ըտտէ կ'ըսէ, որ կառավարութեան մաս կազմելու համար պայման կը նկատէ Սուրիոյ հետ յարաբերութիւններու սրբագրութիւնը:

«Պայրաք» գրած է, թէ թէեւ վարչապետ Հարիրի կը հերքէ կառավարութեան փոփոխութեան լուրերը, բնայց՝ փոփոխութիւնը անպայման տեղի պիտի ունենայ պետական պիտոճի վաւերացումէն ետք, իշխանութեան երեք պետերը համաձայն են այս փոփոխութեան շուրջ

եւ Դամասկոս համաձայն է անոր: «Անուար» նշած է, թէ իշխանութիւնը կը շանայարուեստական ձեւով քաղաքական նոր ուժեր ստեղծել, ժամանակ շահելու համար: Քրիստոնեայ երրորդ խմբաւորման կազմութեան աշխատանքը արդէն սկսած է եւ անոր մասնակցելիք անձնաւորութիւններուն հետ շփումներ տեղի կ'ունենան:

«Սաֆիր»ի համաձայն, մազութի հարցը կրկին սկսաւ արծարծուիլ եւ կառավարութիւնը սկսաւ բանալ քաղաքապետութիւններու թղթածրարները:

«Նահար» լուսարձակի տակ առած է այն իրողութիւնը, թէ դատական գերագոյն խորհուրդի նախագահ նշանակուելէ ետք՝ Թանիստ խորհուրդը յայտարարեց. «Դատական վճիռներուն մէջ եթէ սխալներ ըլլան, անոնք կրնան սրբագրուիլ դատական իշխանութիւններուն ղեկավարի ճակատին մաս կը կազմեն»:

Ըստ «Անուար»ի, «Փարիզ - 2» ժողովին ընթացքին ստացուելիք վարկերը պիտի ծառայեն միայն պարտքերու տոկոսներու հատուցման երկարաձգումին, ինչ որ հարցերուն լուծումը կը յետաձգէ սերունդէ սերունդ:

Իրաքի հարցին առնչութեամբ «Տիար» գրած է, թէ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը այսօր պիտի քուէարկէ Իրաքի մասին ամերիկեան բանաձեռը: Ճորձ Պուշ կը յայտարարէ, որ հաւատարմութիւնը կը յետաձգէ սերունդէ սերունդ:

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՂԱՏԻ ՍԱՐՄԻՆ

«ARMENIA: GENOCIDE DENIED»

Վաւերագրական ֆիլմի ցուցադրութիւն

Սփռուած՝ Աւստրալիոյ պետական «SBS» պատկերասփիւռի կայանի «DATELINE» հաղորդաշարէն:

Ցուցադրութենէն ետք խօսք կ'առնէ ֆիլմի հեղինակ՝

MATTHEW CARNEY

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան - Հ.Մ.Ը.Ս.» մարզամշակութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:

ՀՐԱՒԵՐ

ՀԱՅ ԱՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶՈԼԵՃ

Նախագահութեամբ՝ Լիբանանի Հանրապետութեան Առաջին Տնօրէն

ՏԻԿԻՆ ԱՆՏԻ ԼԱՇՈՒՏԻ ՀԱՅ ԱՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶՈԼԵՃԻ 80ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

Սեցցօ - սփորանօ

ԼԵՆԱ ԲԻՐՔԵՃԵԱՆԻ

Ղաշնակի ընկերակցութեամբ

ԷՎԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

եւ

«ԱՐՄԵՍ» երգչախումբի

Շաբաթ, 7 Դեկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Եսեմալի հոլ»-ին մէջ:

● Տոմարու վաճառման կտրոններ՝

- Ղարոցի գրասենեակ, հեռ. 01 - 349816
- «Գարիմ» հաստատութիւն, Պուրճ Համուտ, հեռ. 01 - 266414
- «Սիթի Սթըյընթրի», Չալքա, հեռ. 01 - 898104
- «Չեկի», Համրա, 01 - 349389
- «Կիլիկիա» ղեկարան, Մար Սըլխայէ, հեռ. 01 - 442668 - 581539
- Առաւել՝ երգահանդէսի օրը՝ կիշէն:
- Սրահին դռները պիտի փակուին ժամը ճիշդ 8:30ին:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ

ՖՐԵՉՆՈՅԻ «ՄԻ. ԷՍ. ԵՈՒ.» ՀԱՄԱԿԱՐԳՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԻՆ ԿԱՅՔԸ



Ֆրեչնո գտնուող Քալիֆորնիա Սթեյթ Եունիվերսիթիի հայկական ուսումնասիրություններու ծրագրի գործադրությունները ղրուած է 1977ին: 1991ին հիմնուած է Հայկական ուսումնասիրություններու կեդրոնը, որ կ'ընդգրկէ «Սահաթեան» գրադարանը, «Աւետեան» արխիւներու կեդրոնը, «Հայ Մարտիմ» թերթը, հայ ուսանողներու կազմակերպությունը եւ հայկական արուեստի գործերու ցանկագրման բաժանմունքը:

Կեդրոնին մասին յաւելեալ մանրամասնութիւններ ստանալու համար կարելի է «այցելել» <http://armenianstudies.csufresno.edu> կայքը:

Կայքի «Ռիսորս Թուլզ» բաժինը խիստ շահեկան է հայ արուեստի, ճարտարապետութեան եւ մանրանրկարչութեան մասին ուսումնասիրություններ կատարողներուն համար:


Օրինակ՝ «Արուեստները» Հայաստանի մէջ՝ բաժինը կը ներկայացնէ արժէքաւոր ուսումնասիրություններ մը հայկական արուեստներու մասին, կատարած՝ փորձ. Տիգրան Գուլումբեանի կողմէ: Ուսումնասիրություններն մէջ ընդգրկուած են նաեւ հայկական քանդակներու, ճարտարապետական կառուցելներու, մանրանկարներու, մետաղեայ սարքերու ստեղծագործութեան եւ արուեստի այլ բնագաւառներէ 300 լուսանկարներ:

Կայքը կ'ընդգրկէ նաեւ երկու առանձին բաժիններ՝ հայկական ճարտարապետութեան եւ մանրանրկարչութեան ցանկագրումին յատկացուած:

Յանձնարարելի կայք մը՝ հայկական ուսումնասիրություններով հետաքրքրուած ոեւէ անձի համար:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴՆՈՒՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՐԵԿԱՄԸ



Մարդուն նորագոյն բարեկամը

Երկկողմանի սարքեր արտադրող ճափոնական ընկերությունները վերջերս հրապարակեց «Փանրիոն» (պահարան վիշապ) անունով մարդամեքենայ մը, որ վայրկեանը 15 մեթր տարածություն կրնայ կտրել:

«Մարդամեքենան» իր վրայ տեղադրուած վիտեո-բաժնեային միջոցով կրնայ իր «տեսածները» ուղարկել իր տիրոջ ընկերության հեռաձայնին: Ան նաեւ հրդեհներու եւ այլ արկածներու պարագային հազանգ կը հնչեցնէ եւ օտարականներու հանդիպելու պարագային «կը հարչ»:

«ԱՉՂԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայն»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակչան թուակազմէ առնուազմ օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՐԸ 5:00: ՄԱՀԱԶԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԵՂԱՇՐՋՈՒՄ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՊԱՏԱՆԱԿՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Համացանցի միջոցով վաճառքներ կատարող ընկերություններ միշտ ալ գիտակցած են, թէ համակարգիչներու առաւել դիւրամատչելի դառնալու պատճառով աճ պիտի արձանագրէ նաեւ համացանցային առեւտուրը:

Համացանցէն գնումներ կատարողները բնականաբար պիտի նախընտրէին բազմաթիւն վրայ նստած՝ քաքալոկի մը ծաւալով դիւրին օգտագործելի սարքի մը միջոցով գնումներ կատարել, քան՝ «գաժուտ» համակարգիչի պատաստին դիմաց եւ տեւաբար կոճակներ սեղմել:


«Լէֆթօֆ»ներ եւ գրպանի համակարգիչներ թէեւ կը տրամադրեն այս հանգստաւէտութիւնը, սակայն անոնց պատաստները նուազ որակաւոր են:

Այժմ գիտնականներ կը զարգացնեն արհեստագիտութիւն մը, որ առիթ պիտի ընծայէ ամբողջ համակարգիչը եւ համակարգչային պատաստը կերպով նկատելի ծալ-լուղ շերտի մը մէջ ամփոփելու: Թէեւ այս արհեստագիտութիւնը տակաւին հեռու է շրջանառութեան մէջ գրուելէ, սակայն յոյս կը ներշնչէ համացանցի միջոցով առեւտուր կատարողներուն, որոնք տարիներէ ի վեր ակնատես կ'ըլլան համակարգիչներու զարգացումին առանց երբեք համակարգիչի պատաստներու արհեստագիտութեան մէջ յեղաշրջումներ նկատելու:

«Ի վերջոյ կը թուի, թէ հարկ եղած բազմաթիւները ունինք պատրաստելու համար ճկուն եւ գերբարակ համակարգչային պատաստ մը», կ'ըսէ Քիմպլըի էլըն անունով մասնագէտ մը:

Այս «գերբարակ» պատաստները շրջանառութեան մէջ գրուելու հոլովոյթին նպաստող խոստմանակից արհեստագիտութիւն մըն է «Օհայտ» (Օրկէնիք Լայթ Էմիթիք Տայոտ) զրուցութիւնը, որ համեմատաբար այսօր օգտագործուող «Էլ. Սի. Տի.» (Լիքուիտ Քրիսթալ ԸՏիփիէյ) համակարգչային պատաստներուն շատ աւելի փոքր ծաւալ կ'ենթադրէ: Գիտնականներ կը նախատեսեն, որ յառաջիկայ հինգ տարիներուն այս արհեստագիտութիւնը զարգացած պիտի ըլլայ այնքան մը, որ կարելի ըլլայ գրպանի մէջ բաւող համակարգչային գերլուստակ պատաստներու արտադրությունը:

Այսպիսով, աշխարհի որեւէ կողմը գտնուող մէկը անթել հաղորդակցութեան միջոցով համացանցին կապուելով կրնայ ուղղակի հետեւիլ ֆունկցիոն մրցումներու, դիտել «Տի. Վի. Տի.»ներ




Համակարգչային ծալլուղ պատաստներ

Եւ կատարել գնումներ: Սակայն «Օհայտ» զրուցութեան զարգացումը ունի դժուարութիւններ: Իր բաժինը, Դիւրին պիտի չըլլայ ամբողջ 20 տարի «Էլ. Սի. Տի.» զրուցութեան գարպացումին համար շահարկումներ կատարել գնումներ:

Սակայն «Օհայտ» զրուցութեան զարգացումը ունի դժուարութիւններ: Իր բաժինը, Դիւրին պիտի չըլլայ ամբողջ 20 տարի «Էլ. Սի. Տի.» զրուցութեան գարպացումին համար շահարկումներ կատարել գնումներ:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



«Կը խոստանա՞ս, Կարապետ, Թալինին Ենամակ, «Ֆաքս», բջիջային հեռաձայնով պատգամներ ուղարկել, մինչեւ որ մահը բաժնէ ձեզ»

Պատրաստե՛ք ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ



«ԿՐՈՔԸՐ» ՓՆՏՈՏՈՒՔԻ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՄԵՔԵՆԱՆ



Համացանցի միջոցով կայքերէն որոշ նիւթի մը մասին տեղեկութիւններ փնտռելը քանի մը երկվայրկեանի հարց է՝ շնորհիւ «Կուկլը»ի (www.google.com) կամ «Քոփեռնիք»ի (www.copernic.com) նման «փնտտութեան մեքենաներու»: Դեկտեմբերին հրապարակ պիտի իջնէ «Կրոքըր» անունով համակարգչային ծրագիր մը, որ պիտի վերարժեւորէ համացանցի միջոցով փնտտութեան կատարելու աշխատանքը:

Ի՞նչ է «Կրոքըր»ի բերած նորութիւնը: Ենթադրենք, թէ ենթական տեղեկութիւններ կը փնտռէ «ցեղասպանութիւն» եզրին մասին. «Կուկլը»ի մէջ նման փնտտութեան գայն կ'առաջնորդէ հարիւրաւոր կայքեր:



ու, որոնք մօտէն կամ հեռուէն ցեղասպանութիւններ կ'առնուին: Աւելին՝ «Կուկլը» իր գտած կայքերը ոչ մէկ ձեւով կը դասակարգէ:


Եթէ միեւնոյն փնտտութեան կատարելը «Կրոքըր»ով, պատաստին վրայ պիտի երեւի քարտէս մը, ուր ներկայացուած են «Յեղասպանութիւն» եզրին նուիրուած կայքերը եւ դասակարգուած՝ ենթաբաժիններու զրուցեմք: Այսպէս, օրինակ, առանձին ենթաբաժիններ կը ներկայացուին «Հայկական Յեղասպանութեան», «Հրէական Ողջակիզումի», «Իտալիայի Յեղասպանութեան», եւ այլն:

Իւրաքանչիւր ենթաբաժինի շրջանակին վրայ «ըլիք» ընելով փնտտողին զիմաց պիտի բացուին նորանոր ենթաբաժիններ: Օրինակ՝ «Հայկական Յեղասպանութիւն» շրջանակը կրնայ ընդգրկել «Հայկական Յեղասպանութիւն եւ Թուրքիա», «Հայկական Յեղասպանութիւն կը ներկայացուին մամուլ» ու նման օրինակ տասնեակ ենթաբաժիններ: Այս ենթաբաժիններուն մէջ «խորանալով» ենթական դիւրութեամբ կը գտնէ իր փնտած տեղեկութիւնը պարունակող կայքը:

«Կրոքըր»ի մասին յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է «այցելել» www.groxis.com հասցէով համացանցի կայքը:

Դժբախտաբար «Կրոքըր»ը ձրիօրէն կարելի չէ օգտագործել: Համակարգչային ծրագիրը կ'արժէ շուրջ 100 տոլար:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԻՐՔԵՐՈՒ «ԹԵՐԹԱՏՈՒՄ»



Շնորհիւ «գիրքերու թերթատում»ի արհեստագիտութեան՝ այսուհետեւ համացանցի միջոցով կարելի պիտի ըլլայ ուսումնասիրել պատմական արժէք ունեցող հնադարեան գիրքեր՝ առանց անոնց հայելու: Արդարեւ, 800 տարի առաջ պատրաստուած 15 միլիոն անգլիական սթերլին արժող «Շէրպոն Միսապը» կարելի է թերթատել՝ «այցելելով» համացանցի www.bl.uk/collections/treasures/digitisation.html հասցէով կայքը:

Գիրքեր համացանցի միջոցով թերթատելու արհեստագիտութիւնը զարգացնող Քլայվ Իւրրո խօսեցիվ այս կայքին մասին ըսաւ. «Կայքը առիթ պիտի ընծայէ համացանցը օգտագործողներու, որ հիանաւ Շէրպոն Միսապըի գեղեցկութեամբ, իրենց տան, գրասենեակին կամ դասարանին մէջ»:

Մանկապատանեկան


ԲՆՈՒԹԻՒՆ

ԾԱՌԻՆ ՇՈՒՐՁ... (Բ. ՄԱՍ)


● Ծառի մը հասակը չափել

Պէտք չունիս ծառի մը վրայ մագլցելու՝ քանակովդ անոր հասակը չափելու համար: Պզտիկ գաւազան մը բաւարար է:

Թեւիդ երկայնքով գաւազան մը դտիր: Թեւիդ երկարելով գայն ուղղահայեաց կերպով բռնէ: Կանգնիր տեղ մը, ուրկէ ձեռքդ երկարելով՝ գաւազանին երկայնքը պիտի համապատասխանէ ծառի հասակին: Այս պարագային քու եւ ծառին միջեւ հեռաւորութիւնը կը համապատասխանէ ծառի հասակին: Այդ հեռաւորութիւնը չափելու համար մեծ քայլեր (1 մետր երկայնք) առ մինչեւ ծառ:



● Յիշողութեան խաղը Պէտք ունիս. Հաստ խաւաքարտ, պզտիկ չափով տերեւներ, խէժ,



մկրատ: Այս խաղին շնորհիւ պիտի ճանչնաս ծառերուն տերեւները:

Բնութեան մէջ պտոյտի մը ընթացքին հաւաքէ՛ 10 տարբեր ծառերէ զոյգ տերեւներ. զանոնք չորցուր գիրքի մը էջերուն մէջ դնելով: 8 x 8 սմ. խաւաքարտի 20 կտորներ կտրէ: Իւրաքանչիւր տերեւ փակցուր խաւաքարտի մը վրայ եւ վրան արձանագրէ անոր համապատասխանող ծառին անունը:

Խաղին օրէնքները: Բոլոր քարտերը գոցուած շարէ սեղանին վրայ: Առաջին խաղացողը կը դարձնէ 2 քարտ. եթէ անոնք նոյնանման են, զանոնք կ'առնէ եւ դարձ-



թիւով գոյգ տերեւներ հաւաքել:

● Տիրուհի հաւաքածոյ

Պէտք ունիս. Թերթի թուղթեր, ցայլուն էջեր

ԻՆՉՈ՞Ւ ԺԱՄԱՆԱԿԸ ԿԱՄԱՅ Կ'ԱՆՑՆԻ, ԵՐԲ ԿԸ ԶԱՆՁՐԱՆԱՆՔ

Երեւակայէ, որ կը գտնուիս նաւակի մը մէջ, որ քնքշօրէն կը սահի գետի մը վրային: Եթէ դուն յատուկ ընելիք մը չունիս, կրնաս հաշուել գետեզերքի ծառերը, տունները...

Սակայն եթէ «թաղւած» ես հետաքրքրական գիրքի մը մէջ, դուն չես կրնար ուսումնասիրել տեսարանը: Եւ երբ գիրքդ կը գոցես եւ շուրջդ կը դիտես, կ'անդրադառնաս, թէ երկար ճամբայ կտրած ես՝ առանց նկատելու:

Ժամանակը կը նմանի այս նաւակին: Երբ մեր միտքը ազատ է, մենք կրնանք հաշուել իւրաքանչիւր վայրկեան, իւրաքանչիւր երկվայրկեան եւ կը նշմարենք, թէ ժամանակը դանդաղօրէն կ'անցնի: Սակայն երբ մեր միտքը զբաղած է,



մենք ուշադրութիւն չենք դարձնելու եւ յանկարծ կ'անդրադառնանք, թէ ժամերը անցել են:


Լաւ է գիտնալ զբաղել

www.lemagan.com

ԱՅԼԱԶԱՆ

● ՄԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ՏՈՒՐՄ ՈՒՏՈՂ

Անգլիոյ մէջ շքեղ նպարտաճառի խանութ մը կը փնտռէ տուրմ համտեսող մը: Ասիկա դժուար գործ մըն է: Այդ մասնագէտը պէտք է պտտի աշխարհի չորս կողմերը՝ գտնելու համար ամէնէն համով տուրմ պատրաստողները եւ համտեսելու անոնց բոլոր արտադրութիւնները: Բազմաթիւ թեկնածուներ ներկայացած են:



● ՇՈՒՆԵՐՈՒՆ ԼՄԱՐ ԱԼ

Ճափոնցի պաղպղղակ պատրաստող մը հնարած է շուներու յատուկ առաջին պաղպղղակը: Ան դասական պաղպղղակներէն նուազ շաքար կը պարունակէ, որպէսզի անասունները աւելի դիւրութեամբ մարսեն:




● ՇԱՍ ՀԻՆ ԽԱՂ ՄԸ

Հնախոյզներ Ալպանիոյ մէջ գտած են 1500 տարեկան ճատրակի խաղի կտոր մը: Այս փղոսկրէ թագաւորը կամ թագուհին Եւրոպայի մէջ գտնուած ամէնէն հին տիպարն է: Պէտք է ըսել, թէ այս խաղը հնարուած է Հնդկաստանի մէջ:



● ԱԼԼՕ՞...


Անգլիացի գիտնականներ հնարած են «մանր» հեռաձայն մը, որ կը գետեզերի ակռայի մը մէջ: Հեռաձայնող անձին խօսքերը կը վերածուին թրթռացումներու, ապա կը փոխանցուին ակռային ականջին ոսկորներուն ընդմէջէն: Այս ձեւով կարելի կ'ըլլայ հեռաձայններ ստանալ, առանց որ շուրջինները անդրադառնան:



ԻՆՉՈ՞Ւ ԶԵՆՔ ԿՐՆԱՐ ՇՆՉԵԼ ԶՈՒՐԻՆ ՏԱԿ



Կենդանի էակները կը շնչեն ապրելու համար: Այս գործողութիւնը անոնց կը հայթայթէ թթուածին կոչուած կազ մը որ գոյութիւն ունի օդին մէջ, ինչպէս նաեւ՝ ջուրին:




Հիւ իրենց խոիկներուն: Զուկը անդադար կը կլլէ ջուրը, որ կ'անցնի խոիկներուն ընդմէջէն: Խոիկները թթուածինը կը գտնեն ջուրէն: Ապա ջուրը դուրս կ'ելլէ ձուկին մարմինին երկու կողմերը գտնուող ճեղքերէն:


Մարդ արարածը կը շնչէ թոքերով: Անոնք տոպրակներու նման գործարաններ են: Մենք օդը ներս կը քաշենք՝ զանոնք լեցնելու համար: Այս օդին մէջ գտնուող թթուածինը կ'անցնի արիւնին մէջ: Ապա մենք օդը դուրս կը հանենք թոքերը պարպելու համար: Թոքերը չեն յարմարեցուած ջուրին թթուածինը գտնելու համար:

www.hamazkayin.com


Ժ Ա Մ Ա Ն Ց



Կրնա՞ս գտնել գանձին հասցնող ճամբան:




Կետերը իրարու միացուր 1-18՝ գտնելու համար պահուած պատկերը:



Կրնա՞ս գտնել այն ինքնաշարժը, որ կը տարբերի միւսներէն:



Կրնա՞ս գտնել այս պատկերին մէջ անբնական մանրամասնութիւնները, ապա գտնել վարի չորս տուփիկներուն տեղը՝ մեծ պատկերին մէջ:



Հաշուէ՛ քառակուսիներուն եւ եռանկյուններուն թիւը եւ ամբողջացուր վարի հաւասարութիւնը:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Հ. Բ. Ը. Մ. ՂԱՐՈՒԿԻ-ՅՈՎԱԿԻՍԵԱՆ
ԵՐԱԳԴ. ՎԱՐՃԱՐԱՆ

ՂԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ-ՑՈՒՑԱԸԱՆԴԵՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՈՒԼԸ
1987-2002

Կը ճերկայացնէ՝
ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ ԵԱԶԼՃԵԱՆ

Տեղի կ'ունենայ Հիմնադրութեան 14 Նոյեմբեր 2002, երեկոյեան ժամը 7:30ին, Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. Ի «Չափել Մովսեսեան» սրահին մէջ:

ԾԱՆՕԹ.- Ցուցահանդէսը պիտի շարունակուի նաեւ յաջորդ օրը, Ուրբաթ, 15 Նոյեմբեր, ժամը 10:00-20:00:

PHOTO NERSES



ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿԱՌՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐ

Չոր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէ մոր հասած ԱՐԴՊԱԿԱՆ DIGITAL ձեռքնային ձեռքով որակաւոր եւ զանազան չափերով Ստանձնում՝ 20 վայրկեանում:

Լուսանկարները կ'արձանագրենք CD-ի եւ կամ FLOPPY տիպէքներու վրայ:

Cameraներու ճոխ հաւաքումը, ալպոմներ եւ նկարի շքանակներու ընտիր տեսակաւոր:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը արդիական մեքենաներով եւ յարմարագոյն զիններով:

Պուրճ Կանուտ. Բաղաբապետարանի փողոց, «Սանթրո Արին»-ի դիմաց. Կե. 01-261858 եւ 01-255992

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՎԻԳԷՆ ՄԱՋԱԶԵԱՆԻ մահուան քառասուն-քին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Նոյեմբեր 2002, Հայ կաթողիկէ Ա. Եղիա Եկեղեցւոյ մէջ, Տեպպաս, առաւօտեան ժամը 11:00ից:

ԱՐՄԷՆ ԱՆԱԼԵԱՆԻ մահուան քառասուն-քին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Նոյեմբեր 2002, Ռքմէյի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԵՐՈՒԱՆԴ ՏԱՆԱԿԵՕՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Նոյեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅԱԿՈԲ ԻՇԽԱՆԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Նոյեմբեր 2002, Ֆանարի մատրան մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԱՐՈՅՐ ՄԵՐՏԻՆԵԱՆԻ մահուան Ը. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Նոյեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ ԱՐԱԶՍԻ ԿԵՕՐԾԵԱՆԻ մահուան քառասուն-քին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Նոյեմբեր 2002, Այնճարի Ս. Պօղոս Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5296

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ | ՈՒՂԱԿԱՅԵԱՅ |
|--|--|
| 1. Մեղմահոս - Փխաբար: | 1. Վարդախոտ - Ձայնանիլ: |
| 2. Բրիտանոսի վարդապետութիւնը քարոզող: | 2. Շաղկապ - Պակասամիտ: |
| 3. Մարտիրոս: | 3. Ստոյիկեան փրկիտփայլութեան հիմնադիրները - Նոյն տառերը - Իգական «նա»: |
| 4. Բղուկ, կաւեղէն զրանածեւ ընդունարան - Դրկից գրեթէ: | 4. Ակոյա - Առնագգետ: |
| 5. Ատոմ Եարճանեանի ծննդավայրը - Ժպիտ: | 5. Ափրիկեան լայնատարած անապատ - Ճար: |
| 6. Յուլյական անապատ - Կտուր: | 6. Դաշտավայր - Իգական օտար անուն: |
| 7. Իգական օտար անուն - Ժամանակի միաւոր - Աղէկ: | 7. Կտոր - Վարսակար: |
| 8. Քաշիկ - Կրկնուած բաղաձայններ: | 8. Պչիլ - Մոնկոլ կրօնաւոր: |
| 9. Ինքնագլուխ: | 9. Մորթի շինուած պարկ - Բողբոջ - Վայրի ելակ: |
| 10. Իգական օտար անուն - Անծին: | 10. Ժխտական պատասխան - Այրուբենէն - Կառքի շրջանակ: |
| 11. Մի՛ սիրեր - Ոլորք: | 11. Որդ - Լեցուն: |

ԹԻՒ 5295

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՍԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Հ	Ր	ՈՒ	Տ	Ի	Ց	Մ	Ա	Կ	Ս
2	Ա	Ր	Գ	Ա	Տ	Մ	Ա	Կ	Ս	Ս
3	Մ	ՈՐ	Ա	Կ	Ե	Ա	Լ	Ս	Ս	Ս
4	ՈՒ	Ի	Ր	Ա	Կ	Ե	Ա	Լ	Ս	Ս
5	Վ	Ա	Կ	Ե	Ա	Լ	Ս	Ս	Ս	Ս
6	Հ	Ա	Կ	Ե	Ա	Լ	Ս	Ս	Ս	Ս
7	ՈՐ	Ա	Կ	Ե	Ա	Լ	Ս	Ս	Ս	Ս
8	Տ	Ա	Կ	Ե	Ա	Լ	Ս	Ս	Ս	Ս
9	ՈՐ	Ա	Կ	Ե	Ա	Լ	Ս	Ս	Ս	Ս
10	Վ	Ա	Կ	Ե	Ա	Լ	Ս	Ս	Ս	Ս
11	Ր	Ա	Կ	Ե	Ա	Լ	Ս	Ս	Ս	Ս

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

www.homenetmencentral.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէլյուրի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիները հետեւեալներէն էին երկ.

Սուրիական թղթակի	32,59 - 32,59 լ.ո.
Իրաքեան տինար	4861,34 - 4861,36 լ.ո.
Քուէթեան տինար	5008,66 - 5009,32 լ.ո.
Յորդանանեան տինար	2124,74 - 2124,74 լ.ո.
Պահրէյնեան տինար	3998,67 - 3998,67 լ.ո.
Ա.Մ. Էմիրութեան տինար	410,42 - 410,43 լ.ո.
Քաթարեան տինար	414,05 - 414,07 լ.ո.
Սէլուական տինար	401,98 - 401,96 լ.ո.
Օմանեան տինար	3915,58 - 3915,68 լ.ո.
Եգիպտական կինէ	324,53 - 324,53 լ.ո.
Անգլիական սթրէյթ	2381,55 - 2387,58 լ.ո.
Չուիցերիական ֆրանք	1037,44 - 1040,87 լ.ո.
Քրթական լիրա	3,23 - 3,77 լ.ո.
Կիպրական փունտ	2661,19 - 2667,07 լ.ո.
Ճափոնական հայար եէն	12,47 - 12,45 լ.ո.
Ափրիկեան հայար ֆրանք	2039 - 2030 լ.ո.
Ամերիկեան տոլար	1507,50 - 1507,00 լ.ո.
Քանադական տոլար	967,40 - 967,59 լ.ո.
Աստրալիական տոլար	852,64 - 851,89 լ.ո.
Եւրո	1519,11 - 1523,03 լ.ո.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի	108,500 - 118,500 լ.ո.
Օմանեան մէկ ոսկի	95,500 - 105,500 լ.ո.
Մեքսիկական փէսո	589,500 - 589,500 լ.ո.
Մէկ քիլոկրամ ձուլ ոսկի	15,000,000 - 15,500,000 լ.ո.
Մէկ օնս ոսկի	320,85 - 322,80 \$
Մէկ օնս արծաթ	4,56 - 4,58 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	1.0111
Քանադական տոլար	1.5589
Չուիցերիական ֆրանք	1.4468
Ճափոնական եէն	120.88
Մէկ սթրէյթ	1.5856
Մէկ տոլար	583 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գինի Ա. ճշրում	Գինի Բ. ճշրում
Ա. կարգ	4 4/8
Բ. կարգ	5 5

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ) Եթէ կ'ուզէք ձեր գործերը յառաջ տանիլ, շուտով մի յուսահատիք: Շարունակեցէք աշխատիլ, ու պիտի տեսնէք, թէ ամէն ինչ կարգին մտած է:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս) Եթէ այսօր որոշած էք երկար ճամբորդութիւն մը կատարել, անիկա պիտի անցնի յաջող, զուարթ եւ հովուերգական: Ուրեմն մի՛ յետաձգէք զայն:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս) Առարկայ մը ծախելու նպատակ ունէիք որոշ գինի մը փոխարէն, բայց ձեր ակնկալած գումարը պիտի չանցնի ձեր ձեռքը: Ուշադիր եղէք նաեւ ապրանք մը գնելու պարագային, որպէսզի սուղ գին չվճարէք:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) Մէկը ձեր վտահուտիւնը չարաչար գործածած է եւ դաւադիր կեցուածք պիտի ունենայ: Անոր այս վերաբերումը պիտի չկրնաք ներել ներկայիս, բայց թերեւս ներքեւ անիլ ուշ:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Ձեր աշխատանքին կառոյցը զօրաւոր կերպով հաստատած էք, ու ոչ մէկ արգելք պիտի կարենայ զայն խախտել: Մնացէք ձեր որոշումին վրայ:

☆ **ԱՂՅԱ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր եւս պիտի շարունակուիք սիրալիր հանդիպումները: Օրը իրեն հետ պիտի բերէ հանելի անակնկալներ, որոնք պիտի բարեխաւսեն ձեր տրամադրութիւնը:

☆ **ԿՇԻՌ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Բարեկամական հանդիպում մը պիտի վերածուի վիճարանութեան մը՝ սպառնալից մթնոլորտով: Բայց զուր երկար ստեն բարկութիւնը մի պահէք:

☆ **ԱՂԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Վերատեսութեան ենթարկեցէք այս շաբթավերջին ձեր բոլոր աշխատանքները, ուսումնասիրական վերաբաղ ըլլայ թէ տարբեր մարզի հաշի կամ գրաւոր աշխատանք, որպէսզի անցեալ տարուան ձեր սորվածը կամ ձեր պատասխանը չմոռնաք:

☆ **ԱՂԵՂՆԱՌՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Այսօր քիչ մը չոր տրամադրութիւն պիտի ունենաք: Ու ամէն անգամ որ այսպիսի վիճակ ունենաք, կ'ուզէք շուկայ երթալ գնումի: Այսօր այդպէս պիտի ընէք:

☆ **ԱՅՅԵՂՂԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Եթէ մոլի հաւաքածոյ պահող մըն էք, կամ՝ այլ աշխատանքի մը նուիրեալ անձ մը, այսօր ձեր գործերը յաջող պիտի ընթանան եւ պիտի ուրախանաք:

☆ **ԾՈՎԱՆՈՅԸ** (21 Յունուարէն 19 Փետրուար) Ունիք բազմատեսակ պարտաւորութիւններ, ու այս պատճառով հաճոյքը պիտի փոխարինուի պարտականութիւններ կատարելով, ինչ որ պիտի պղտորէ ձեր տրամադրութիւնը:

☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) Այսօր տօնական երեկոյ մը կազմակերպեցէք ձեր տան մէջ: Եթէ մասնաւոր ընելիք մը չունիք, հրաւիրեցէք ձեր բարեկամները եւ խնձրի սեյւանի մը շուրջ գուրբացէք:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՈՂ / ՅՈՒՅԱՀԱՆԳԻՄ / ԹԱՏՐՈՆ

ՇԷՅՔՍՓԻՐԵԱՆ ԴԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ՝ «ՌՈՍԷՕ ԵՒ ԵՐԿՈՒ ԺԻՒԼԻԵՐԵՐ» ԹԱՏԵՐԱԽԱՂԸ

Մինչ շէյքսփիրեան քատրերգութիւններ վերջին քանի մը տարիներու ճամբորդութիւններ կը կատարեն վերածնունդի դարէն մինչեւ մեր ժամանակները եւ այդպէս մուտք կը գործեն շարժապատկերի աշխարհ, իրանանցի քատրոնի բեմադրիչ Ռոնի Ալու չատպա նոյնը կը փորձէ կատարել իրանանեան բեմին վրայ: Շէյքսփիրեան դասական «Ռոմէօ եւ Ճիւլիէթ» պատարէն տեղադրելով ներկայի ժամանակաշրջանին մէջ՝ ան կատարած է երկու այլ փոփոխութիւններ եւս: Թատրախաղին անունը վերաբերելու է...



«Ռոմէօ եւ Երկու Ժուլիէթեր» քատրախաղէն պատկեր մը

Ռոմէօն է... «Ռոմէօ եւ Երկու Ժուլիէթեր»-ու, իսկ յորհրգութիւնը դարձած է կատարելագործ, ուր հերոսը կ'ուզէ ունենալ երկու ժուլիէթ: Այս հարցին միակ լուծումը քատրախաղը կը գտնէ Ռոմէօն երկու ժուլիէթերը քատրախաղին էլոյթները, որոնց ստաշին երկուքը տեղի ունեցան նախորդ օրերու, կը շարունակուին 9 եւ 10 Նոյեմբերին: Թատրախաղին մէջ բեմադրչին կողքին դեր տասնամեծ են Մէյսուն Հիլալ, Տանիա Արիտի, Մայա Ալու Մրատ եւ ուրիշներ:

Ռոմէօն է... «Ռոմէօ եւ Երկու Ժուլիէթեր»-ու, իսկ յորհրգութիւնը դարձած է կատարելագործ, ուր հերոսը կ'ուզէ ունենալ երկու ժուլիէթ: Այս հարցին միակ լուծումը քատրախաղը կը գտնէ Ռոմէօն երկու ժուլիէթերը քատրախաղին էլոյթները, որոնց ստաշին երկուքը տեղի ունեցան նախորդ օրերու, կը շարունակուին 9 եւ 10 Նոյեմբերին: Թատրախաղին մէջ բեմադրչին կողքին դեր տասնամեծ են Մէյսուն Հիլալ, Տանիա Արիտի, Մայա Ալու Մրատ եւ ուրիշներ:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

Թ.Է.Լ.

09:00 - Սպաիտ	14:30 - Մափեր 20
12:00 - Շիֆր է	15:00 - Լուրեր
	15:30 - Արաքական

12:30 - Երգերու յայտագիր

13:00 - Մարտի հանա

14:00 - Եւրոնիւզ

14:30 - Լուրեր

15:00 - Մըշուար

17:30 - Պէս սելըր

18:30 - Ալու Մըլիէ

19:30 - Լուրեր

20:00 - Ամերիկեան յայտագիր

21:00 - Լայալի Պէյրուր

00:00 - Պէս սելըր

10:45 - Անցեալը ներկան է

11:10 - Հայերը

11:30 - «Արեւիկ»

12:00 - Կանանց հեռուստատեսութիւնը

13:30 - Առողջութեան աշխարհ

13:50 - Հեռուստաներկայացում. Գէորգ Գէորգեան «Դաշտադէմ»

15:00 - Հայրուր

15:20 - Մուշէֆիմ «Դէ, սպաիր»

15:45 - Արթուր Դ

16:10 - Բարի ախորժակ

16:30 - Երեկոյեան Երեան

16:40 - Խորան լուսոյ

16:50 - Հեռուստատեսային գրատուն (ստաշին մաս)

17:20 - «Շէկ ինքնաթիռ»

18:35 - Տուս-տուսիկ

19:00 - Հայրուր

19:50 - Չինուծ

20:25 - Երկրի ուժը

20:45 - Երաժշտական փոստարկ

22:00 - Հայրուր

22:20 - Երեկոյեան Երեան

22:30 - Խորան լուսոյ

22:40 - Հեռուստատեսային գրատուն (ստաշին մաս)

23:40 - Հեռուստաներկայացում. Գէորգ Գէորգեան «Դաշտադէմ»

00:15 - Կանանց հեռուստատեսութիւնը

01:45 - So, ո՛հ, մի

03:00 - Հայրուր

03:45 - Դանի, մի պատմութիւն պատմիր

04:00 - Անցեալը ներկան է Երեան

04:45 - Երեկոյեան Երեան

04:55 - Հայերը

04:55 - Հեռուստաներկայացում. Գէորգ Գէորգեան «Դաշտադէմ»

06:00 - Ծիծաղի տուն



Է.Լ.Պ.ՍԻ.

07:00 - Մի. Էն. Էն. տիւ մորնիկ
07:30 - Պէրմէն
08:25 - Տէտէ, պիկ պէյթ
09:30 - Մատուկներու յատուկ քատրոն
10:00 - Ռամատանի խոհանոց
10:30 - Նահարքոմ Սայիտ
12:15 - Վիտո - քիփս
12:30 - Ռամատանի յատուկ խոհանոց
13:00 - Ուոլդո
13:00 - Ռեպրիկ Զէմփիլընչիփ
14:00 - Ճուրպոյլ. Զէմփիլընչի Լիկ
15:00 - Լուրեր
15:15 -

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

ՎԱՂԸ ԿԸ ՍԿՍԻ Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ

ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Վաղը՝ Կիրակի, 10 Նոյեմբեր կեսօրից ետք ժամը 2:00ին, Հ. Մ. Ը. Մ.ի Պուրճ Համուտի պասքեթբոլի խումբը կը կատարէ Լիբանանի Դ. Դասակարգի ախոյեանութեան 2002-2003 եղանակի իր առաջին մրցումը՝ Սաժէս Մար Տումէթի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ Սաժէսի Ժրտէյ-տէի դաշտին վրայ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 8:00ին, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս եւս կը կատարէ Ա. հանգրուանի իր առաջին մրցումը՝ Ֆրէր Պէյթ Մէրիի դէմ (Քֆարիւրպապի դաշտ):

ՊՈՒՆՏԸՍԼԻԿԱ

ԱՅՍՕՐ՝ ՊԱՅԷՐՆ ՄԻՒՆԻՒՆ – ՊՈՐՈՒՍԻԱ ՏՈՐԹՍՈՒՆՏ

Գերմանիոյ ֆութբոլի ախոյեանութեան (Պուներպիկա) 12րդ հանգրուանի գագաթի ճակատումը տեղի կ'ունենայ այսօր, Միւնխիի Ռիւպիլիակի հանգրուանի դաշտին վրայ, ուր պարագլուխի դիրքը գրաւող Պայէրն Միւնխի կը հիւրընկալէ 2րդ դիրքը գրաւող Պորուսիա Տորթմունտը:

Տորթմունտ, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, այժմ երկու կէտով ետ կը մնայ Պայէրնէն: Սակայն յաղթանակի մը պարագային անիկա յոյս ունի գերապանցելու Պայէրնը եւ մէկ կէտի առաւելութիւն մը ունենալու: Նշենք սակայն, թէ վերջին վեց հանդիպումներուն բոլորին ալ Պայէրն իր դաշտին վրայ պարտութեան մատնած է այսօրուան իր մրցակիցը:

Այնքալ Երեքշաբթի օր Բ. դասակարգի Ֆրայպուրկէն 3-0 արդիւնքով պարտուած (Գերմանիոյ բաժակ), Տորթմունտ իր ամէն կարելին պիտի ընէ յաղթանակ մը արձանագրել, ինքզինք կարենալ վերագտնելու համար:

3րդ դիրքը գրաւող 1860 Միւնխի, որ երեք կէտով ետ կը մնայ Պայէրնէն, հիւրը պիտի ըլլայ Համպուրկի (13րդ), որ այդքան ալ լաւ օրերու մէջ չի գտնուիր ներկայիս, իր կրած վեց պարտութիւններէն ետք: Հակառակ այս մէկին սակայն Միւնխիի կապը իր վերջին չորս այցելութիւններուն ընթացքին, Համպուրկի դաշտէն կրցած է հեռանալ միայն մէկ կէտով:

Շալքէ (5րդ), որ պիտի հիւրընկալէ Պայէր Լեւերքուզը (14րդ), սկզբունքով յաղթանակ պէտք է արձանագրէ, սակայն անիկա 1997էն ի վեր չէ կրցած պարտութեան մատնել Պայէր Լեւերքուզը:

Ստորեւ՝ 12րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (Շաբաթ օրուան մրցումները տեղի կ'ունենան ժամը 16:30ին, իսկ Կիրակի օրուան մրցումները՝ 18:30ին): Նշենք, թէ փակագիծին մէջ նշուած է անոնց գրաւած դիրքերը՝ ընդհանուր դասաւորման մէջ.

- ԱՅՍՕՐ
 - Վոյֆապուրկ (9) – Վերտրը Պրենն (4)
 - Համպուրկ (13) – 1860 Միւնխի (3)
 - Արմինիա Պիլֆէլտ (11) – Նիւրեմպէրկ (12)
 - Շալքէ (5) – Պայէր Լեւերքուզը (14)
 - Շթուրկարթ (7) – Պոխում (6)
 - Քայլերբայալթըրն (17) – Հանովըր 96 (15)
 - Պայէրն Միւնխի (1) – Պորուսիա Տորթմունտ (2)
- ՎԱՂԸ
 - Հերթա Պերլին (8) – Հանպա Ռոսթըր (10)
 - Պորուսիա Մէօնշտընկլաուպախ (16) – Քոթպուտ (18)

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՎԱՂԸ՝ Ը. Մ. Ը. Մ. - ՆԱՇՏԱ ՊԱՐ ԷԼԻԱՍ

Լիբանանի ֆութբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 2րդ հանգրուանի ճակատումներուն, վաղը՝ Կիրակի, ժամը 2:00ին, Հ. Մ. Ը. Մ.ի ֆութբոլի ներկայացուցչական խումբը կը կատարէ 2002-2003 եղանակի իր երկրորդ մրցումը, Պուրճ Համուտի Քաղաքայէտարանի դաշտին վրայ հիւրընկալելով Նահտա Պար Էլիասը, որ իր կատարած առաջին մրցումին 2-0 ապրիլնքով պարտութիւն մը կրած էր Ռիատա Ռալ Ատապէն:

Հ. Մ. Ը. Մ., որ եղանակի բացման մրցումին նոյն այս դաշտին վրայ արձանագրեց եղանակի իր առաջին յաղթանակը, 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնելով Հըրրիէ Մաժուալ Այն-ճարը, ոչ միայն եղանակի իր երկրորդ յաղթանակը պիտի արձանագրէ, այլեւ բազմաթիւ անգամներով պիտի ցնցէ իր մրցակիցին բերդին ուռկանը,

որպէսզի յաջողի գերապանցել Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն շատ անելի մեծ թիւով լեցնել թրիպիւնը եւ ցարդ ամէնէն բարձր արդիւնքը արձանագրած Մահապա Ռիպիւրին (6-1), որ այժմ կը գրաւէ պարագլուխի դիրքը:

Հ. Մ. Ը. Մ.ի համաՍտորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը.

Վ. ԴԱՍԱԿԱՐԳ (3րդ հանգրուան)	ԺԱՄ
● ՇԱՐԱԹ, 9 ՆՈՅԵՄԲԵՐ	14:15hG
Ախա Անի Ալէյ – Նըթմէ	17:00hG
Մապարրա – Սաֆա	17:00hG

● ԿԻՐԱԿԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐ	ԺԱՄ
Անսար – Թատամոն Սուր	1:00hG
Անտ – Սաժէս	2:00hG
Շապապ Սահէլ – Պըրժ	2:00hG
Սալամ – Օլիմպիք	2:00hG

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ (2րդ հանգրուան) Բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 2:00ին:

● ԱՅՍՕՐ	ԴԱՇՏ
Ռապիւկ – Թատամոն Նապարիէ Պ.	Համուտ
Իժթիմախի – Հ. Մ. Ը. Մ.	Թրիփոլի
Շապ. Խիամ – Շապ. Թրիփոլի	Սաֆա
● ՎԱՂԸ	
Ֆիթիան Սալտա – Ռիատա Ռալ Ատապ	
	Իսլահ Պըրժ Շիմալի
Հ. Մ. Ը. Մ. – Նահտա Պար Էլիաս Պ.	Համուտ
Մաժուալ Այնճար – Իսլահ Պըրժ Շիմալի	Խիարա

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ՄԱՆՉԵՍԹԵՐ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՊԻՆ

Անգլիոյ ֆութբոլի ախոյեանութեան 13րդ հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենայ Մանչեսթըր Քալքի տերպիսի Սիթիի եւ Եունայթըդի միջև:

Ը ն դ հ ա ն ր ա պ է ս տերպիսի մրցումները կ'ըլլան հետաքրքրական: Մարպիչ Ալէքս Տերկարն կը յուսայ, որ իր կապը իր 50րդ յաղթանակը պիտի արձանագրէ Սիթիի դէմ (ախոյեանութեան մրցումներուն):

Տերպիսի այս մրցումը պիտի ըլլայ վերջինը, որ պիտի կատարուի «Մէյն Ռոտ»ի մէջ, որովհետեւ յառաջիկայ եղանակէն սկսեալ Սիթի իր

մրցումները պիտի կատարէ իր նոր դաշտին վրայ:

Մարպիչ Քեւրն Քիլընի կապը վերջին անգամ Եունայթըդը պարտութեան մատնած է 1989ին (5 - 1): Մրցումին նախօրեակին սակայն Եունայթըդ կը գտնուի դժուարութիւններու առջեւ, որովհետեւ պիտի բացակային Տէյֆիտ Պէթիամ (կարկայնուած), Նիքի Պարե (Ռոյ Քին (վիրաւոր): Պարագլուխի դիրքը գրաւող Լիվըրպուլ, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, պիտի այցելէ «Ռիվըրսայտ»ի

դաշտ, ուր հիւրը պիտի ըլլայ Միտլըլպուրի (9րդ):

Լիվըրպուլէն չորս կէտով ետ մնացող Արսենալ (2րդ) «Հայաբրի» իր դաշտին մէջ պիտի հիւրընկալէ Նիւքեալը (8րդ):

Այնքալ Զորեքշաբթի օր Սանտրիլէնտէն 3 - 2 արդիւնքով պարտուած է Անգլիոյ լիկայի բաժակի մրցաշարին դուրս մնացած մարպիչ Արսենալէն կապը, իր ամէն կարելին պիտի ընէ երեք կէտ իջելու համար իր մրցակիցին, այլապէս անելիով կրնայ հեռանալ Լիվըրպուլէն:

Ստորեւ՝ 13րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (փակագիծին մէջ նշուած են անոնց գրաւած դիրքերը, իսկ ժամերը նկատի պէտք է ունենայ Պէյրոլթի ժամով).

● ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Մանչեսթըր Սիթի (14) - Մանչ. Եունայթըդ (3)	14:15hG
Արսենալ (2) - Նիւքեալ (8)	17:00hG
Ասթըն Վիլա (15) - Ֆուլհէմ (11)	17:00hG
Պոլսթըն (20) - Ուէսթ Պրոմիս (19)	17:00hG
Չելսի (4) - Պիմսֆորտ (12)	17:00hG
Էվըրթըն (6) - Չարլթըն (16)	17:00hG
Միտլըլպուր (9) - Լիվըրպուլ (1)	17:00hG
Սաութհէմթըն (10) - Պիլքեպըր (7)	17:00hG

● ՎԱՂԸ	ԺԱՄ
Ուէսթ Համ (17) - Լիօ (13)	16:00hG
Սանտըրլէնտ (18) - Թոթեմհամ (5)	18:00hG

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ՎԱԼԵՆՍԻԱ - ՌԷԱԼ ՊԵԹԻՍ

Սպանիոյ ֆութբոլի ախոյեանութեան 9րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ռեալ Մադրիտ, այսօր կարենալ մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրընկալէ Տելուրթիօ Քորուան (7րդ):

9րդ հանգրուանի կարեւորագոյն մրցումներէն մէկը պիտի ըլլայ Վալենսիա - Ռեալ Պետիս ճակատումը, որ տեղի պիտի ունենայ առաջինին դաշտին «Մետալիս»ի մէջ:

8րդ դիրքին վրայ գտնուող Պարսելոնա իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Վիարեալը (16րդ):

Ստորեւ՝ 9րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրոլթի ժամով, իսկ փակագիծին մէջ նշուած են անոնց գրաւած դիրքերը).	ԺԱՄ
Մալայա (9) - Օսասունա (19)	19:00hG
Ռալո Վալենսիա (13) - Ռ. Մալորիտ (6)	21:00hG
Ռ. Մալորիտ (1) - Տել. Քորուան (7)	21:00hG
Պարսելոնա (8) - Վիարեալ (16)	22:15hG
Վալենսիա (2) - Ռեալ Պետիս (5)	22:30hG

ՃԱՏՐԱԿ

35ՐԴ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՒԱՐՏԻՆ

Սլովենիոյ Պլէր քաղաքին մէջ տեղի ունեցող ճատրակի 35րդ Ողիմպիականի 13րդ եւ նախաՎերջին հանգրուանին իրենց կատարած մրցումին, երէկ Լիբանանի աղջիկները 3-0 արդիւնքով պարտութեան մատնեցին Չամիլոյ հաւաքականը:

Հ. Մ. Ը. Մ.ական Քարիկ Մուրատեան, որ իր բաժինը ունեցաւ արձանագրուած այդ յաղթանակին մէջ, այժմ 11ի վրայ ունի 7,5 կէտ եւ առաջին տասին մէջ կը գտնուի: Քնարիկ, որ ցարդ արձանագրած է 6 յաղթանակ, 3 հաւասարութիւն եւ կրած է 2 պարտութիւն, վերջին հանգրուանին յաղթանակ մըն ալ արձանագրելու պարագային առաջին հիւրին մէջ պիտի ըլլայ եւ տիրանայ մետալի մը:

Հայաստանի տղոց հաւաքականը 12րդ հանգրուանին 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ուքրաինան, երէկ 13րդ հանգրուանին 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Հունգարիոյ հետ:

Իսկ Հայաստանի աղջիկները, 12րդ հանգրուանին իրենց կատարած մրցումին 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեցին Չինաստանի հետ:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՍԵԼԹԻՔՍ - ԼԷՅԲԸՐՈՂ՝ 98 - 95

Էն. Պի. Էյ. երկուսն մրցումներուն, ախոյեան Լուս Անճելըս Լէյքըրը կրեց եղանակի իր չորրորդ պարտութիւնը, երբ 98 - 95 արդիւնքով պարտուած հեռացաւ Պոսթըն Սելթիքսի դաշտէն: Սելթիքս արձանագրեց եղանակի իր երրորդ յաղթանակը:

Հակառակ Շաքի Օնիլի (վիրաւոր) եւ Ռիք Տոքսի (կախակալուած) բացակայութեան, Լէյքըրը մարպիկ Քոպէ Պրայնը նշանակեց 41 կէտ: Իսկ Սելթիքսի մարպիկներէն Փոյ Փիսը նշանակեց 28 կէտ: Միւնխափոլիսի մէջ, Միւնխափոլիս 114 - 110 արդիւնքով պարտութեան մատնեց Միլուոքի Պարքը: Վերջապէս, երկուսն երրորդ եւ վերջին մրցումին Տիթթիք Փիսթընը 89 - 63 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Տենսըր Նակէթըրը:

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը. Նիւ Եորք Նիքս - Ինտիանա Փէյլըրը Սիթթի Սուփըրսոնթըր - Օրլանտո Մէճիք Էլիվէնտ Զաւալիթ - Ֆիլադելֆիա Սիքսըրզ Լուս Անճելըս Էլիվըրզ - Նիւ Ճըրզի Նէթը Լուս Անճելըս Լէյքըրզ - Ուաշինկթըն Ուիզարտ Տալա Մալթրիթ - Շիքսո Պուլզ Կոլտըն Սթէյթ Ուորիորզ - Նիւ Օրլինզ Փորթլէնտ Ռէյլս Պիլքըրզ - Ֆեօնիքս Սանզ Աթլանթա Նոքս - Ետրա Ճէզ Մեմֆիս Կրիզլիզ - Սաքրամենթօ Էիլկզ

ՃԱՏՐԱԿ


1



ՍԵՒԵՐ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԹՈՒՍՈՎ

ԹՈՄՉԱԶՈՎՍԵԱՅ Վ. - ՄԱՍՆՈՎԱ Ի. (2002)


2



ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԹՈՒՍՈՎ

ԱՇՄԵՏ Ի. - ԱԼԻՐԱՆԻ Ս. (2002)


3



ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԹՈՒՍՈՎ

ՇԻԹԱԺ Լ. - ՌԻՍՒ Ի. (2002)

4



ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԹՈՒՍՈՎ

ԶԻՍԹՈՅ ՏՐԱԶՈՎՍԵՒ (2002)

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Լուլիշեան

«ՀԱՅ ԴՊՐՈՅԸ ԱՅՍՕՐ»...

Շարունակուած 2րդ էջէն

Ապա կ'որ սեղանի կրուցավար Յովիկ Ներսիսեան հարցում - պատահանի դրութեամբ տնօրէններուն հետ քննարկեց հայ դպրոցը յուլոյդ հարցեր:

Ներկայացուցեցան հայ դպրոցներուն աշակերտներուն թիւին նուազման պահանջան կատարանները՝ տնտեսական տագնապ, քաղքենիացում, օտարամտութիւն, հայկականութենէ պարպուելու եւ անկէ հեռու մնալու իրողութիւն, հայկականի փոխարին օտար դպրոց ուղարկելու սովորութիւն եւ այլն: Ապա մանրամասն արծարծուեցաւ հայ դպրոցին անփոխարինելի դերը ապագայ հայ սերունդներու կազմաւորման ընթացքին մէջ: Շեշտը դրուեցաւ հայերէնի կարեւորութեան վրայ, առանց որուն հայ անհատը շատ մեծ բան կը կորսնցնէ նախ իբրեւ մարդ, ապա իբրեւ հայ: Լուսարձակի տակ առնուեցան նաեւ այն պատճառաբանութիւնները, որոնք կը ներկայացուին իրենց կատարանները օտար վարժարանները զրկող ծնողներուն կողմէ՝ ասոնց դիմաց անդրադառնալով այն բոլոր առաւելութիւններուն եւ արդի միջոցներուն ու ձեւերուն, որոնք ունին հայ դպրոցները:

Հայ դպրոցին դիմագրուած տագնապին ծալքերուն մէջ խորանալով՝ շեշտը դրուեցաւ այն իրողութեան վրայ, թէ ներկայ ցաւալի իրավիճակը արդիւնք է ժամանակի ընթացքին գաղութին մէջ արձանագրուած ետդարձին, հայկականութենէ պիտուին, օտարամտութեան եւ օտարամտութիւններուն դէմ պայքարի չզոյլութեան եւ ծնողներուն ու նոյնիսկ կարգ մը պատասխանատուներուն հաստատ ու վճարակամ որոշումներու բացակայութեան:

Խօսուեցաւ այն ցաւալի իրողութեան մասին, որ ներկայիս մտայնութիւնը փոխուած է եւ ծնողները իրենք իսկ պարպուած են իրենց հայկականութենէն եւ հայ գիրը, գրականութիւնը, պատմութիւնն ու մշակութիւնը, որոնք անփոխարինելի հարստութիւններ են, կը նկատեն «աւելորդ, աշակերտը ծանրաբեռնող» նիւթեր:

Քննարկման աւարտին շեշտուեցաւ, թէ հայ դպրոցը կրունան է հայ սերունդներուն եւ սիրտը՝ ապագայ հայութեան:

Չեղնարկին ընթացքին խօսք առին նաեւ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան փոխ նախարարն ու Հայաստանի դեսպանը:

